ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 4666-Ա «18» նոյեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱԼ.ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԱՆՎԱՆ Հ.21 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԳԵՆՏԻՆՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» Հ.76 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԵՐԵՎԱՆԻ Լ.ՏՈԼՍՏՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.128 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի Հ.4046-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման N3 հավելվածի 32-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգով, հիմք ընդունելով «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց», «Երևանի «Արգենտինյան Հանրապետություն» հ.76 հիմնական դպրոց», «Երևանի Լ.Տոլստոյի անվան հ. 128 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի քարտուղարի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի գրությունը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2025 թվականի նոյեմբերի 11-ի հ.Ն/66959-25 զեկուցագիրը.

1. Դադարեցնել «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական դպրոց», «Երևանի «Արգենտինյան Հանրապետություն» հ.76 հիմնական դպրոց», «Երևանի Լ.Տոլստոյի անվան հ.128 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամ Իրինա Վարդանովայի լիազորությունները:

2. Երևանի քաղաքապետի 2024 թվականի հոկտեմբերի 21-ի «Երևանի մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կազմերը հաստատելու, Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 25-ի հ.632-Ա, 2021 թվականի հուլիսի 22-ի հ.հ. 596-Ա, 2597-Ա, 2598-Ա, 2599-Ա, 2600-Ա, 2601-Ա, 2602-Ա, 2603-Ա, 2604-Ա, 2605-Ա, 2606-Ա, 2607-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.4046-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետի 5-րդ սյունակում՝ «Վարդանովա Իրինա» բառերը փոխարինել «Պողոսյան Նվարդ» բառերով.

2) որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետի 6-րդ սյունակում՝ «Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի պատասխանատու, առաջատար մասնագետ» բառերը փոխարինել «Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ» բառերով:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ